

# ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՂԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,  
Պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արեւելագիտության  
ինստիտուտի Հին Արեւելքի բաժնի վարիչ

Հայ-ասորեստանյան, հայկախոսական եւ հայ-ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների թեման արծարծելիս, բնականաբար, աչքի է զարնում այն հանգամանքը, որ սեպագիր արձանագրություններում նրանք հիշատակվում են հին արեւելյան արքաների դեպի Հայկական լեռնաշխարհ ձեռնարկած նվաճողական արշավանքների նկարագրություններով: Ուստի ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե ասորեստանյան, խոսքական կամ ուրարտական, այլ օտար տարածքների հետ: Հետեւաբար, երբ մասնագիտական գրականության մեջ երբեմն այդ ամենը հապճեպ անվանում են Ասորեստանի, Խոսքական թագավորության եւ Ուրարտուի տոպոնիմիկա եւ էթնոնիմիկա, ապա դա ամենեւին լիարժեք չի արտահայտում պատմական իրողությունը:

Կարծում ենք, որ դրանք ավելի շուտ սեպագիր աղբյուրներում հիշատակված օտար տեղանուններ եւ ցեղանուններ են՝ ասորեստանցիների, խոսքերի եւ ուրարտացիների կողմից հարմարեցված իրենց վանկագիր սեպագիր կանոններին: Օրինակ, հին հայկական Աղձնիքը սեպագիր աղբյուրներում հիշատակվում է «Ալսե», «Ալգի» եւ «Ալգինի» իդենտիկ հորջորջմամբ խոսքերի, ասորեստանցիների եւ ուրարտացիների մոտ, Տայքը՝ «Դ-այանի» եւ «Դ-իաուխի» ասորեստանցիների եւ ուրարտացիների մոտ, Կաղմեայ տունը՝ «Կաղմուխի», իսկ Կրերեացը՝ «Կիրրուրի» ասորեստանցիների մոտ, Տուն Թորգոմայկը՝ «Թեգարամ(մ)ա» եւ «Թիլ Գարիմմու» խոսքերի եւ ասորեստանցիների մոտ, Տնորիքը՝ «Տումուրու» ասորեստանցիների, Ծովիքը՝ «Իշուա», «Իսուվա» եւ «Ծուվանի», իսկ «Մալաթիան»՝ «Մելիդ», «Մալդիյա», «Մելիտեա» ասորեստանցիների, խոսքերի ու ուրարտացիների մոտ եւ այլն:

Նշենք նաեւ, որ իրենց անընդմեջ ռազմական արշավանքների ընթացքում ասորեստանցիները մուտք են գործել Հայկական լեռնաշխարհի հարավային եւ հյուսիսարեւմտյան, իսկ խեթերը՝ հազվադեպ սոսկ արեւմտյան որոշ տարածքներ: Այդ պատճառով էլ հայաստրեստանյան, մանավանդ հայկաթական տեղանվանական ընդհանրությունները կազմում են համեմատաբար սահմանափակ թիվ: Ինչ վերաբերում է հայկուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրություններին, ապա նրանք կազմում են շատ ավելի պատկառելի թիվ: Ի դեպ, հատկանշական է, որ բուն ուրարտական տեղանունները սեպագրերում, ինչպես հայտնի է, սերում են նրանց արքաների անուններից եւ դիցանուններից, ըստ որում նրանց թիվը, որքան էլ տարօրինակ թվա, չի հասնում նույնիսկ երեք տասնյակի:

Ելնելով վերոհիշյալից, դժվար չէ կռահել, որ հայ-ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրություններն արծարծվող հիմնահարցում պետք է գրավեն կենտրոնական տեղ: Ուստի պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ դրանք սկսել են բացահայտվել դեռեւս սեպագիր աղբյուրների վերծանությունից եւ նրանց առաջին հրատարակություններից սկսած:

Մասնագիտական գրականության մեջ բացահայտվել է հայ-ասորեստանյան, հայ-խեթական եւ հայ-ուրարտական բազում տեղանունների այլ զուգադրումների մի ամբողջ շարք եւս: Դրանցից են Էնգիտե-Անձիտը, Կուլխա-Կողքիտը, Արծանիա-Արածանին, Կուլլիմերիև-Կուլմերիև-Քդիմարը, Մարկասու-Մարաշը, Նիխիրյա-Նփրկերտը, Տուշպա-Տոսպը, Թումիշկի-Թմնիտը, Անաշե-Ալաշկերտը, Ջուանի-Ջիվիներ, Կուլիաինի-Կուլիջանը, Տուարածինի խուբի-Տուարածատափը, Չաբախա-Չավախաքը, Կատարգա-Կղարջքը, Աբիլիանի-Աբեղեանքը, Աբունի-Հավնունիքը, Ալիա-Ադիովիտը, Ուրտեխի-Արցախը, Էրիկուախի-Ուրկովին, Կուտումե-Կոտոմը, Տարիունիև-Դարույնքը, Գիառնիանի-Գառնին, Թարրաբա-Թրաբաին, Ծուլուկուև-Ծղուկը եւ այլն:

Վերը թվարկված փաստական նյութով, անշուշտ, ամենեւին չեն սպառվում հին հայկական եւ սեպագիր աղբյուրների տեղանունների եւ ցեղանունների ընդհանրությունները: Այդ բավական ծավալուն, արտակարգ կարեւոր ու հետաքրքրական թեման կարիք ունի հատուկ ուսումնասիրության: Մակայն մեր այս հակիրճ հաղորդման բուն նպատակը ոչ թե այդ ընդհանրությունների սպառիչ արտացոլումն է,

այլ դրանց սոսկ թաքնված պատմական արձանների բացահայտումը:

Այստեղ, առաջին հերթին, վերին աստիճանի կարեւոր խնդիր է պարզել, թե՞ արդո՞ք տվյալ դեպքում մենք գործ ունենք հին արեւելյա՞ն, թե՞ հին հայկական տեղանունների ու ցեղանունների հետ: Այդ հարցին սպառնիչ պատասխան կարող են տալ ինչպես սեպագիր, այնպես էլ հին հայկական գրավոր աղբյուրները:

Օրինակ, ասորեստանյան, խեթական եւ ուրարտական սեպագիր աղբյուրները վկայում են, որ դրանք ի սկզբանե եղել են օտար տարածքներ, որոնք հին արեւելյան արքաներն ասպատակել կամ երկարատեւ եւ համառ պայքարից հետո նվաճել են անընդմեջ արշավանքներով: Ինչ վերաբերում է հին հայկական գրավոր աղբյուրներին, ապա նրանք այդ տարածքները ներկայացնում են որպէս պատմական Հայաստանի համապատասխան նահանգներ, գավառներ, բնակատեղիներ եւ աշխարհագրական այլ միավորներ:

Հետեւաբար, ասվածից եւ հայկասորեստանյան, հայկխեթական եւ հայկուրարտական համադրություններից հստակ երեւում է, որ դրանք, անկասկած, պետք է դասել հին հայկական տոպոնիմների, էթնոնիմների եւ հիդրոնիմների շարքը: Ասպատակելով կամ նվաճելով այդ նահանգներն ու գավառները, հին արեւելյան արքաները, բնականաբար, ստիպված են եղել նրանց հայկական հորջորջումներն արձանագրություններում հարմարեցնել իրենց վանկագիր սեպագրի կանոններին: Դա է պատմական իրողությունը:

Մյուս կողմից, ասորեստանյան սեպագիր աղբյուրները վկայում են, որ դեռեւս ցեղային միությունների դարաշրջանի ուրարտացիները մ. թ. ա. XIIIIX դարերում Հայկական լեռնաշխարհի խորքերն են աստիճանաբար ներթափանցել հարավից (Տիգրիսի եւ Մեծ Չարի վերին հոսանքներից)՝ վաղ հայկական ցեղերի ու ցեղային միությունների համառ դիմադրության պայմաններում: Դա հաստատվում է հատկապէս մ. թ. ա. XIII դարի ասորեստանյան թագավոր Սալմանասար II-ի մի արձանագրության մեջ հիշատակված Ուրուատրի ցեղային միության 8 մարզերի՝ Խիմմեի, Ուատկունի, Բարգունի, Սալուայի, Խալիլայի, Լուխայի, Նիլիպախրիի եւ Չինգունի տեղադրումներով:

Նույնիսկ Վանա լճի ավազանում եւ հարակից տարածքներում ուրարտացիները հաստատվել են սոսկ մ. թ. ա. IX դարի կեսերին՝ պետականության ստեղծման պահին: Հենց այդ ժամանակ էլ այստեղ

նրանք սկզբում հիմնադրել են իրենց Արծաշկու-Արծկե. իսկ ավելի ուշ՝ Տուշպակ-Տոսպ մայրաքաղաքները:

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային նահանգներին ու գավառներին, ապա այստեղ ուրարտացիները երևացել են սուկ մ. թ. ա. IX դարի վերջերին կամ VIII դարի սկզբներին: Իսկ մ. թ. ա. VII դարում՝ Ուրարտուի անկման դարաշրջանում, երբ կորսվում էին նախկինում նրա ձեռք բերած մարզերը հարավում եւ այլուր, վերելք ապրող հայկական ցեղերն ու ցեղային միություններն իրենց հյուսիսային տարածքներից աստիճանաբար դուրս են մղում ուրարտացիներին եւ գամում նախնական սահմանափակ տարածքին՝ Վանա լճի ավազանին եւ նրա շրջակայքին: Փոքրիշատե հեռավոր տարածքներից հյուսիսում, որքան մեզ հայտնի է, Ուրարտուի կազմում, ընդհուպ նրա կործանումը շարունակում է մնալ սուկ Արարատյան դաշտավայրի Վազա երկիրը՝ Թեյշեբախնի վարչատնտեսական կենտրոնով:

Այսպիսով, սեպագիր աղբյուրների եւ հին հայկական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների վարագույրի հետևում թաքնված է վաղ հայկական ցեղերի ու ցեղային միությունների տարածման արեալը մ. թ. ա. II-I հազարամյակներում լայնատարած Հայկական լեռնաշխարհում՝ հյուսիսում մինչեւ պատմական Կոարջք եւ Ջավախք, հյուսիսարեւմուտքում՝ մինչեւ պատմական Տայք, հյուսիսարեւելքում՝ մինչեւ Մեանա լճի ավազանը, Գեղամա լեռները եւ Արցախ, արեւելքում՝ մինչեւ Ուրմիա լճին արեւելքից հարող շրջանները, արեւմուտքում՝ մինչեւ անդրեփրատյան մի շարք տարածքներ, իսկ հարավում՝ մինչեւ Տիգրիսի եւ Մեծ Չաքի վերին հոսանքները:

Այն հանգամանքը, որ հայերը հնուց եղել են Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները, ապա հայկաստրեստանյան, հայկախեթական եւ հայկուրարտական տեղանվանական ընդհանրությունների հետ, հաստատվում է նաեւ մի շարք այլ հավաստի կռվաններով:

Ի դեպ, հայերի էթնոգենեզի վերաբերյալ առաջ քաշված միգրացիոն տեսությունը Բալկաններից՝ հայերենի հնդեվրոպական լեզու լինելու հիման վրա, վաղուց ապրել է իր դարը: Նորագույն հայտնագործումներն էլ, ընդհակառակը, վկայում են, որ հնդեվրոպական նախացեղերի հայրենիքը եղել են Հայկական լեռնաշխարհը եւ հարակից տարածքները: Դա հիմնավորվում է նաեւ

հայերենի եւ սեպագիր ակկադերենի, հայերենի եւ սեպագիր ուրարտերենի ընդհանրություններով:

Ներկայումս պարզվել է, որ հնդեվրոպական հայերենի բառապաշարի մի հարուստ շերտ, որը չի առնչվում հնդեվրոպական արմատներին, բավական համոզիչ հիմնավորվում է սեմալեզու ակկադերենի (ասսուրաբաբելերենի) հետ անվիճելի աղերսներով: Դա վկայում է, որ հայերը, համեմայն դեպս, սկսած մ. թ. ա. III հազարամյակի վերջերից կամ II հազարամյակի սկզբներից, եղել են ակկադերի եւ ասորեստանցիների ու բաբելացիների հյուսիսային հարեւանները: Հետեւաբար, ինքնին հասկանալի է, որ բառապաշարային այդ ընդհանրությունները, ավելի ճիշտ՝ սեմալեզու ակկադերենի բառապաշարի առկայությունը հնդեվրոպալեզու հայերենում արդյունք է վաղ հայկական ցեղերի եւ ակկադերի կամ ասսուրաբաբելացիների քաղաքական ու տնտեսական հիմնավորք դարավոր շփումների:

Շատ ավելի վստահ կարելի է պնդել հնդեվրոպական հայերենի եւ ոչ հնդեվրոպական ուրարտերենի բառամթերքի ընդհանրությունները: Հատկանշական է, որ այստեղ հայերենի բառապաշարի ներթափանցումն ուրարտերեն եւ, հակադարձը՝ ուրարտերենի բառամթերքի ներթափանցումը հայերեն ընթացել են շատ ավելի բարենպաստ պայմաններում: Այդ կապակցությամբ պետք է նկատի ունենալ այն կարեւոր հանգամանքը, որ վաղ հայկական ցեղերն ու ցեղային միությունները եւ պետականության դարաշրջանի ուրարտացիները համարյա երեք երկար ու ձիգ հարյուրամյակներ ապաստան են գտել կողքակողքի միեւնույն ընդարձակ տարածքում՝ ողջ Հայկական լեռնաշխարհում:

Մյուս կողմից, դժվար չէ նշմարել, որ հին հայկական նահանգներն ու գավառները սեպագիր աղբյուրներում հիշատակվում են հին արեւելյան գավթիչների ասպատակելու կամ գավթելու կապակցությամբ: Իսկ դա նշանակում է, որ հիշյալ ռազմական հակամարտությունների հիմքում ընկած է եղել հին հայկական ցեղերի ու ցեղային միությունների դարավոր անհաշտ պայքարն ասորեստանյան եւ ուրարտական հզոր տերությունների դեմ՝ իրենց անկախության համար: Ըստ որում, այդ անընդմեջ բախումների ընթացքում հին հայկական հզոր ցեղային միություններն աստիճանաբար բուռն վերելք են ապրում եւ իրենց հիմնական ախոյանին՝ Բիայնիլիևուրարտուին քայլ առ քայլ դուրս մղում Հայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքներից: Այդ

պայքարում, անկասկած, հարավում զգալի դեր են խաղացել նաեւ սկզբում Ասորեստանը, այնուհետեւ Բաբելոնիան եւ Մեդիան (Մարաստանը)՝ կիմմերների եւ սկյութների հետ:

Ի դեպ, այն հանգամանքը, որ մասնագիտական գրականության մեջ սովորաբար ուրարտացիների գերեզմանափոր են ներկայացվում մեդիացիները (մարաստանցիները) եւ բաբելացիները, մասամբ էլ սկյութներն ու կիմմերները, ամենեւին լիարժեք չի արտահայտում պատմական իրողությունը: Միամտություն կլիներ խորհել, թե Մեդիան (Մարաստանը) եւ Բաբելոնիան կարող էին վիթխարի ջանքեր գործադրել եւ կործանել երբեմնի հզորագույն Վանի թագավորությունը, որից հետո այդ լայնատարած եւ ըստ ամենայնի հարուստ երկիրը մեծահոգաբար սկուտեղի վրա հրամցնել հայերին: Հետեւաբար դժվար չէ կռահել, որ հին արեւելյան Ուրարտական պետության հիմնական կործանարար ուժերը եղել են տեղի հին հայկական հզորագույն ցեղային միությունները, որոնք, այնուհետեւ, հենց նույն ընդարձակ տարածքի վրա հիմնել են իրենց մնայուն պետականությունը:

Ինչ վերաբերում է ուրարտացիներին, ապա նրանք եւ ֆիզիկապես, եւ մշակույթով աստիճանաբար լիովին ձուլվել են կազմավորված հայ ժողովրդին: Դրանից, բնականաբար, հետեւում է, որ եթե անցյալի ուրարտացին ծագումով հայ չէր, ապա ներկայիս հայը նաեւ ուրարտացի է:

Մի խոսքով, հին հայկական ցեղերի ու ցեղային միությունների դարավոր պայքարի պատմությունը ասորեստանցիների եւ ուրարտացիների դեմ Հայկական լեռնաշխարհում, փաստորեն, հայ ժողովրդի կազմավորման դարաշրջանի պատմությունն է, ուրարտացիների (եւ ոչ միայն ուրարտացիների) հայերի մեջ ըստ ամենայնի տարրալուծվելու պատմությունը:

**ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ը**  
**ՁՈՐԱՎԱՐ ԱՆՊՐԱՆԻԿԻ**  
**ՐԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ 80-ԱՄՅԱԿԻ ՕՐՆ Է**



*Ձորավար Անդրանիկի ուսանելի կյանքը հիմնականում պատկառելի սերնդի ոգեկոչմանն ու խոնարհումին է արժանանում, գրեթե անմասն մնալով աճող սերնդի դաստիարակության կարևոր գործից: Սակայն Անդրանիկ Ձորավարի գործի շարունակության ու անվան նվիրյալ, մեր խմբագրության լավ բարեկամ, «Ձորավար Անդրանիկ» միության հիմնադիր նախագահ Նորայր Մուշեղյանը լրացնում է առկա բացը: Պարոն Մուշեղյանը պարբերաբար խմբագրություն է բերում հրապարակման վերաձած իր թանկարժեք տեղեկությունները, ասես նյութականությունից թմրած մեր հասարակությանը հիշեցնելու, որ հայր լավ պիտի սերտի հերոսի կյանքի պատմության մանրամասները եւ նրա օրինակով ապրելով արժանի համարվի Անդրանիկի հետնորդ կոչվելուն:*

*Քո անունը պիտի հիշվի դարեդար...*

*(Աշոտ Շերամի հայտնի երգից, գրված 1901 թ.)*

Վերջին քսան տարիներին հայրենիքում եւ սփյուռքում հրատարակվեցին մի շարք մենագրություններ, դոկտորներ Անդրանիկ Չելեյանի, Համբարձում Կարապետյանի, ակադեմիկոսներ Գեորգ Ղարիբջանյանի, Հրաչիկ Միմոնյանի, անդրանիկապաշտ եւ անդրանիկագետ Ռուբեն Միմոնյանի ուսումնասիրությունները:

Ցավոք, մեր օրերում հատկապես նոր սերնդին քիչ է հետաքրքրում ազգային հերոս, ազգային արժեք, ազգային արժանապատվություն հասկացությունները: Միջին եւ ավագ սերնդի մեծ մասն էլ օրվա հացի խնդրով է մտահոգված:

Մեր օրերում դրամն է թելադրողը, մի տեղ ցույց կյանքի զեխություն, ժողովրդի մեծ մասի մեջ՝ աղքատություն, թշվառություն: Ի՞նչ կասեր Անդրանիկը. Բայց... գանք Չորավարին, հայտնի է, որ Չորավարը միշտ էլ ապրել է կարիքի մեջ, մի՞թե հերոսն առանց ֆինանսական նեղության չէր կարող ապրել:

Իհարկե կարող էր, հավաստիացումներ, խնդրեմ.

1919 թ. ձմռան վերջերին Չորավարը իր մոտ եղած գումարի շոշափելի մասը թողեց Մյունիքի ղեկավարությանը՝ գաղթականների հոգները հոգալու համար: Այդ նույն թվականի գարնանը, երբ Չորավարը հարկադրաբար հեռանում էր հայրենիքից, իր մոտ եղած ողջ գումարը՝ 60 հազար ռուսական ոսկին հանձնում է Գեորգ Ե կաթողիկոսին՝ պատգամելով 45 հազարով հոգալ գաղթականների կարիքները, 15 հազարով էլ մի հուշարձան կանգնեցնել Երեւանի հրապարակներից մեկում 30 տարի իր հետ ազատության համար պայքարած, զոհված, անշիրիմ մնացած զինվորների հիշատակին:

Կարող էր, չէ՞, այդ գումարները պահել իրեն, ո՞վ էր հաշվել...

Հայտնի է, որ Չորավարի հայրենիքից հեռանալու մեջ իրենց սեւ գործը կատարեցին ոչ միայն անգլիական եւ վրաց կառավարությունները (վերջիններս աչք ունեին Լոռվա մարզի, հատկապես Ալավերդու պղնձի հանքավայրերի վրա), այլեւ այն ժամանակվա հանրապետության որոշ ապիկար եւ կաշառված ղեկավարները:

Ուրախ էին Վրաստանի ղեկավարները, որ ի վերջո չեզոքանում է Անդրանիկի ուժը հայոց երկրում, եւ ժամանակի հարց է Լոռին գրավելը, եւ նրանք այնպիսի ճոխ սեղան էին բացել Թիֆլիսում Չորավարին ընդունելու եւ փառքով ճանապարհելու համար...

Հայտնի է նաեւ, որ հերոսը հացի սեղանին չմոտեցավ այնքան ժամանակ, մինչեւ վրաց կառավարությունը արտաքին գործոց



նախարար Գեգեշկորիին հանձնարարեց վերացնել Բաթում-Երեւան երկաթգծի բլոկադան եւ մինչեւ ցորենով, ալյուրով, դեղորայքով, հագուստով բեռնված վագոնների շարասյունը մտնի Հայաստանի տարածք: Այդ ժամանակ Թիֆլիսում գիտեին, որ Չորավարը միայն երեք պարկ գարի է վերցրել իր Ասլան ձիուն կերակրելու համար... Եվ այդ ժամանակ նրան են հանձնում խոշոր մի գումար ճանապարհորդական ծախսերը հոգալու համար: Չորավարը այդ գումարն էլ շոգեքարշի ղեկավարի միջոցով ուղարկում է կաթողիկոսին. կարո՞ղ էր այդ գումարը պահել իր մոտ, իհարկե... կարող էր:

1922 թ. Փարիզում ամուսնության առիթով նորապասակներին ընծայվեց շուրջ կես փութ զարդեղեն (Չորավարի այրի, 70-ամյա տիկին Նվարդի 1966 թ. Վառնայում ինձ պատմածից), որոնք վերածելով գումարի, Չորավարը սննդամթերք, դեղամիջոց, հագուստեղեն է ուղարկում Հայաստան:

Հայտնի է նաեւ, որ նույն՝ 1922 թ. նորապասակներին հրավիրում են Անգլիա, որտեղ, հատկապէս Մանչեսթրում, ընծայվում են մեծ քանակությամբ զարդեր, որոնք Անդրանիկը նույնպէս օգտագործում է հայրենիքին օգնելու նպատակով:

Մինչեւ այժմ էլ բացահայտված չէ, թե ինչ դրդապատճառով Չորավարը Փարիզից մեկնեց եւ բնակություն հաստատեց Ամերիկայի Ֆրեզնո քաղաքում, չէ՞ որ Փարիզում էր բնակվում մեծ բարերար, նրա հարսանիքի կնքահայր Պողոս Նուբար փաշան...

Ի դեպ, Ֆրեզնոյում է Չորավարին առաջին անգամ տեսնում եւ այդ տպավորության տակ մի զգայացունց պատմվածք գրում Վիլյամ Սարոյանը:

Գիտենք նաեւ, թե որքան մեծ էր Հովհաննես Թումանյանի եւ Անդրանիկի բարեկամությունը: Երբ Չորավարը տեղեկանում է, որ Օհանեսին գումար է պետք Մոսկվայում վիրահատություն կատարելու համար, բանկից տոկոսով վերցնում է մեծ գումար եւ ուղարկում է Թումանյանի որդի Համիկին...

Գրեթե բոլոր հեղինակների մոտ միակերպ նշված է, որ երբ 1926-ին Խորհրդային Հայաստանից պաշտոնական պատվիրակություն էր գնացել ԱՄՆ հանգանակություն կատարելու, տեղում հանդիպում է հայկական համայնքի շատ սառը վերաբերմունքին եւ կանգնում առաքելության ձախողման տխուր փաստի առջեւ:

Ահա այդ ժամանակ է, որ հայրենասեր հերոսը հանդես է գալիս իր ողջ վեհությամբ եւ հայրենիքին օգնելու աննահանջ

վճռականությամբ, խնդրելով պահանջում է, պահանջելով խնդրում եւ այսօրվա չափանիշով շուրջ մեկ միլիարդ դոլար հանգանակելով հանձնում է պատվիրակության ղեկավար Գրիգոր Վարդանյանին: Չորավարը Հայաստան բերելու համար նույն պատվիրակությանն է հանձնում ժամանակին եզիպտահայերից ստացած պատյանը, մեծարժեք ադամանդներով զարդարված ոսկեգօծ թանկարժեք սուրը:

Չորավարի էությունը բնորոշող մի փաստ, որի մասին նույն՝ 1966-ին ինձ պատմեց տիկին Նվարդը: «Մուղ կապրեինք, Չորավարն էլ հիվանդ էր, դեղերի, բժիշկների համար դրամի կարիք ունեինք, եւ երբ իմացա, որ Չորավարը կպատրաստվի իր համար թանկ ընծա սուրը հանձնել Հայաստան տանելու համար, խնդրեցի՝ Չորավար, այս սուրի պատյանին վրայի թանկարժեք մեկ ադամանդը հանել տանք, ուրիշ քար տեղադրենք, արժեքավոր քարի գումարով հիվանդությանդ ծախսերը հոգանք: Այնպես հայացք նետեց վրաս, որ մինչեւ օրս հիշելուս կսարսափիմ, կամչնամ»:

Չորավարն իր ողջ էությունը գոհաբերեց իր սիրելի ժողովրդի ազատության ու բարօրության գործին, հայ ժողովուրդն էլ մի երախտագետ վերաբերմունք ունեցավ իր Մեծ գավակի հիշատակի հավերժացման գործում:

Անդրանիկը հավերժ կապրի իր շատ սիրելի ժողովրդի հետ:

**ՆՈՐԱՅՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ, «Չորավար Անդրանիկ» միության  
հիմնադիր նախագահ**

## Survivors



**ARPIAR MISSAKIAN**

*born 1894, Kessab*

**I**n 1909, during the Adana massacres, Turkish soldiers attacked Kessab. I was merely a boy then. They were 20,000 strong with Mausers and other artillery. The men of our town fought

back, my father among them, with ancient hunting rifles. We lost 50-60 men before we fled. We returned 5-6 days later to find all our houses burned to the ground. It took us months to rebuild.

In 1915, we were the last to be deported out of Kessab because we were Protestant. The American Ambassador in Bolis had apparently secured guarantees for our safety, but we were deported anyway. They took us toward Der-Zor—the interior Syrian desert. Our whole family: my father, mother, four brothers, two sisters. I was 20-21, at the time. We loaded everything we had on mules and horses and set out under armed guards. They took us to Meskeneh on the Euphrates river. Meskeneh was a huge outdoor camp where ten of thousands of Armenians had been deported—bit by bit they were sent to Der-Zor, to their death. We were there for awhile. We lived under tents along with a lot of others from Kessab. Most of the time we had nothing to eat. Sometimes my father would buy bread from the soldiers but they had mixed sand with the flour—so we ate this hard bread and sand crunched under our teeth.

Meskeneh was a horrible, horrible place. 60,000 Armenians had been buried under the sand there. When a sandstorm hit, it would blow away a lot of the sand and uncover those remains. Bones, bones, bones were everywhere then. Wherever you looked, wherever you walked.